

Ներբողինի ճառեր խօսուելէն ետքը՝ ի պէս զի հայրենասիրութեան ու անցոյց Բալէոքաբայի արդեանցը ու արժանաւորութեանը, աւանդեցին յիշատակարանը ապագայ ժամանակաց, որ-

իսոնջ վաստակոց օրինակ ըլլայ յետադայ սերնդոց :



ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԼԱԶՆԵՐ

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԼԱԶՆԵՐ

Երաժշտութեան զօրութիւնն մեծ է մարդկային մտաց ու սրտին վրայ, և այս ամենուն յայտ է : Կը տեսնեմք որ

զօրականն'ի ձայն երգոց կ'արհամարհէ ամենածանր վտանգն իսկ ու կը դիմէ 'ի ստոյգ մահ . նոքա որ երկշոտ են, մէյմէկ դիւցազն կը դառնան, և նոքա որ վայրենաբարոյ ու անոպայք են՝ կը

հանդարտին, ու գթութեան և քաղցրութեան զգացումը կը գրաւէ սիրտերնին :

Ամենայն ժողովուրդք, բարբարոսն ու քաղաքականացեալն, ոկսելով յանյիշատակ ժամանակաց, ունեցած են իրենց երգիշներն ու երաժշտներն, աւելի կամ նուազ զարգացեալ ու հրահանգեալ. որուն վրայ մեծ ազդեցութիւն ունի նոյն երկրին կլիմայն ու աշխարհագրական դիրքն. բաց աստի դարձեալ նոյն ժողովրդեան աւանդութիւններն, պաշտամունքն, օրէնքն ու սովորութիւններն : Եւ որչափ չեմք կարծեր, երաժշտութիւնը մեծ կախումն ունի իւրաքանչիւր ազգաց ունեցած վիճակին հետ, և կը յայտնէ անոնց յառաջադիմութիւնն ու յետամնացութիւնը, բարուց մեղկութիւնն ու չափաւորութիւնը, միով բանիւ կը յայտնէ դոդցեսնոյն ազգին ինչպիսի ըլլալը :

Իտալիա ունեցած է և ունի ճարտար երաժիշտներ ու նուագածուներ, վասն զի ճոխացեալ է 'ի բնութենէ ընտիր երկնաւ ու երկրաւ, ուր թոշնոց գեղգեղաձայն երգերն, ջրոց խոխոջներն, և հողմոց շառաչիւնը, կը ստիպէ և զժողովուրդն իսկ որ բնակի 'ի նմա՝ երգիշ ու երաժիշտ ըլլալ, ուղելով իր ճաշակն բնութեան վրայ :

Ժողովրդոց զարգացման ու յառաջադիմութեան մեծ դրդիչ ու նշան է երաժշտութիւնը : Յունաստան երբեմն յայն պայծառութիւն հասաւ, վասն զի ունեցաւ իր Որփէոսներն . նոյնը եղաւ և այժմեան ժողովրդոց . ժամանակաւ գաղղիական, անգղիական ու իտալական ազինք յանտառս ու 'ի լերինս կէին ու թափառէին . որոց 'ի ծայրքաղաքականութեան հասնելուն գլխաւոր պատճառ եղաւ երաժշտութիւնը :

Ինչպիս ասոնք սոյնպիս և գերմանացիք վայրենի ժողովուրդ մ' էին, բայց և սոքա քաղաքականացան 'ի ձեռն երաժշտաց . ունեցան յանցեալ ժամանակս անուանի երաժիշտներ, ո-

րոնք 'ի մեծ կատարելութիւն հասուցին զերաժշտութիւն 'ի գերմանիա . ունին և ներկայապէս, որոց մէջ գլխաւորներէն մէկն է լահնէր (Lachner), որ ժամանակիս առաջին երաժշտաց մէկն է :

Փրանկիսկոս լահնէր, երգիոնահարի որդի մ' էր, ծնեալ յամին 1804 ապրիլ 2: Հետամուտ եղաւ և ուսաւ զերաժշտութիւն 'ի մատաղ տիոց, անանկ որ 'ի հասակի հնգետասան ամաց կը զարմացընէր զամենայն ոքյաջողութեամբն հարկանելոյ զերգիոն, զրիանօֆորդ և գընար :

Յամին 1824 երգիոնահար եղաւ վեննայի բողոքականաց եկեղեցւոյն մէջ, ապա 1826ին գլուխ կարգեցին զնա Բորդա Քարինցիա անուն թատեր երաժշտաց . իսկ յամին 1834 առաջնորդ կոչեցաւ մատրան 'ի Մանհայմ . բայց վերջապէս Պաւիէրայի արգունիքը հրաւիրուեցաւ, և 1852ին ընդհանուր ուղղիչ անուանեցաւ արգունական երաժշտութեան : Մոնաքոյի թատրոնին մէջ այլ և այլ նուագաւոր թատերական տեսիլներ ներկայացուց, ինչպէս՝ Ալիտիա, Պէնվենուդո Զէլինի, կատարինէ Քոռնարո, և այլն : Իր հոգևորական նուագացը մէջ մեծ անուն ունին Մովսէս և Զորեքին հասակք մարդոյ : Իսկ դաշնակաւոր երաժշտութեան մէջ առաջին մրցանակը ժառանգեց 'ի Վեննա :

Լահների երգոց յատկութիւնքն են բնականութիւն առանց բռնազրօսութեան, և սկզբնատպութիւն առանց սկիզբնատիպ երեել ջանալու :

Իր երկու եղբարքն, իգնատիոս և Վիշէն լահնէր, իրմէ ետքը յաջորդաբար վեննայի վերանորոգեալ եկեղեցւոյն երգիոնահարքն եղան, և գլուխ երաժշտաց բազում արքունեաց և գերմանիոյ թատերց . առաջինը մասնաւորապէս իբրև ուսուցիչ մեծ անուն ունի . երկուքն իսկ շարադրեցին շատ մը երաժշտութիւններ և փառակից եղան իրենց եղբօրը :

